

ՊՐՈՖ. Ա. Բ. ԱԼԵԿՍԱՆԾԱՆ

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

ՀԱՅԳԵՏՀՐԱՏ

616.322

2907

W-29

F-Sunder 1/1/2

F Sunday

204

ԳՐԱԴ. Ա. Ռ. ԱՆԻՍՅԱՆՆԵՐՆ

616.929

Ա. 29

ՀԱՅԿԱՅԻՆ ԷՆՍԿԼՈՊԵԴԻԱ

2007

ԲՇԱՎՈՐ ՏԻՖ



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԵՐԵՎԱՆ

1944

A $\frac{1}{2489}$

Проф. А. Б. АЛЕКСАНИЯ
СЫПНОЙ ТИФ

(На армянском языке)
Аргиз, Ереван, 1944

ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

Խնչպես հայտնի է, բժավոր տիֆը ծանր վարակիչ հիվանդություն է: Բժավոր տիֆը մարդկությանը վաղուց է հայտնի: 19-րդ դարի պատերազմները միշտ էլ ուղեկցվել են բժավոր տիֆով:

Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, որը ռազմաճակատ դուրս բերեց միլիոնավոր մասսաներ, և դրանով իսկ առաջացրեց ահագին թվով մարդկանց տեղափոխություններ, ըստ վիճակագրական տվյալների, միայն Ռուսաստանում հիվանդացավ բնակչության մոտ ¹/₅ մասը: Ձորամասերը, ռազմագերիները և զորացրվածները վերադառնալով ռազմաճակատից, իրենց հետ բերում և Ռուսաստանի ամենահեռավոր անկյուններում

տարածում էին բծավոր տիֆը: Այն ժամանակ հիվանդացածների ընդհանուր թվից (մոտ 20 միլիոն մարդ) գրեթե 2 միլիոնը մահացավ: Բծավոր տիֆի պատմությանն անծանոթ են նման մեծ ու սարսափելի թվեր:

Հայաստանի պայմաններում բծավոր տիֆի տարածման գործում, խոշոր դեր խաղաց դադթականությունը, որը հարկադրաբար անցնելով շարունակ մի տեղից մի այլ տեղ, քաղցից ու ցրտից տառապելով, ամեն ինչից ղուրկ, ոջլոտ ու հաճախ մի կտոր հացի կարոտ, կոտորվում էր բծավոր տիֆից, միաժամանակ շրջապատող մարդկանց վարակման աղբյուր հանդիսանում: Այդպիսի էր դաշնակցականների ժամանակ:

Ընկեր Լենինը, տեսնելով թե ինչպես ամբողջ սովետական երկիրը տառապում է բծավոր տիֆի համաճարակից, որը ծանր ժառանգություն էր մնացել ցարիզմից, ժողկոմսովետի նիստերից մեկում բծավոր տիֆի դեմ մղվող պայքարը հայտարարում է հերթական և հարվածային մի խնդիր:

Ահա թե ինչ է ասել Լենինը բծավոր տիֆի մասին. «Մեր դեմ է արշավում մի նոր, մի

երբորդ ազետ. դա ոջիլն է, բժաւոր տիֆը, որ
 հնձում է մեր գորքերին: Այստեղ, ընկերներ,
 անհնարին է պատկերացնել այն սարսափները,
 որ տեղի ունեն բժաւոր տիֆով բռնված վայ-
 րերում, երբ ընակչությունն ուժասպառ է, թու-
 լացած, երբ նա զուրկ է նյութական միջոցնե-
 րից,—ամեն կյանք, ամեն հասարակայնություն
 մեռնում է: Այստեղ արդեն մենք առում ենք.
 կամ ոջիլը կհաղթի սոցիալիզմին, կամ սոցիա-
 լիզմը պետք է հաղթի ոջիլներին» (Լենին, եր-
 կերի ժողովածու, հատոր XVI, էջ 421—422):

Թե որքան ծանր է ընթանում բժաւոր
 տիֆը, հայտնի է շատերին: Զուր չէ որ շատերը
 վախենում և ամեն կերպ խուսափում են բժա-
 վոր տիֆի վարակից: Եթե մենք ոջիլներին մե-
 ղադրում ենք բժաւոր տիֆ տարածելու մեջ
 (իսկ այդպիսի մեղադրանք մենք միանգամայն
 արդարացի կերպով ենք բարդել ոջիլների վրա),
 ապա երբ մեկին կծում է բժաւոր տիֆով վա-
 րակված ոջիլը, նա պետք է սպասի, որ պիտի
 հիվանդանա բժաւոր տիֆով:

Ոջիլ կծելուց հետո անմիջապես բժաւոր տիֆ
 չի առաջանում, այլ անցնում է որոշ ժամանակ.

կծելուց հետո հիվանդությունն արտահայտվում է սովորաբար 10—12—14-րդ օրը (երբեմն մի քանի օր ավելի կամ պակաս)։ Ստացվում է հիվանդության յուրատեսակ գաղտնի շրջան, երբ վարակը մտնելով օրգանիզմի մեջ, հասունանում է այնտեղ և տալիս բծավոր տիֆի իսկական պատկերը։ Հիվանդության այդ գաղտնի (ինկուբացիոն) շրջանը սովորաբար ոչ մի բանով իրեն չի ցույց տալիս և այդ շրջանն անցնելուց հետո միայն հիվանդությունն ակտիվ է միանգամից։ Հաճախ լինում են դեպքեր, երբ մարդիկ որևէ տեղ շփվելով ոջլոտ մարդկանց հետ և տուն վերադառնալով, 12—14 օրից հետո (ոչ ավելի 20 օրից) հիվանդանում են բծավոր տիֆով։ Հիվանդացածն սկզբում մրսում է, դողում, սկըսվում է գլխացավ։

Հիվանդի ջերմաստիճանը սովորաբար միանգամից է բարձրանում և հասնում մինչև 38—39 և ավելի բարձր աստիճանի և այդպես բարձր, աննշան տատանումներով մնում է 12—14 օր։ Հիվանդությունն սկսվելուց 3—4—5 օր անց հիվանդի մարմնի վրա, մասնավորապես կրծքի, ձեռքերի, ոտների, նույնիսկ դեմքի վրա

երևան են գալիս բծեր, կամ ինչպես ասում են՝
մարմինը «դուրս է տալիս»։ Այդ բծերը լինում
են մանր, մոտավորապես գնդասեղի գլխի մե-
ծության, կարմրագույն և հաճախ մաշկի մա-
կերեսից քիչ բարձր։ Եթե այդ բծերը դուրս են
ևկել, ապա նրանք տեսանելի են հասարակ
աչքով։

Եվ որովհետև բծավոր տիֆի ժամանակ
մարմնի վրա բծեր են առաջանում, ուստի և այդ
հիվանդությունը կոչվում է «բծավոր տիֆ»։
Հիվանդության ժամանակ գլխացավերը սաստ-
կանում են, հիվանդը զառանցում է, գիտակցու-
թյունը կորցնում, անկողնից դուրս թռչում և
այլն։

Բծավոր տիֆը պատկանում է այն հիվան-
դությունների շարքին, որոնք սովորաբար չեն
կրկնվում։ այսինքն բծավոր տիֆով մի անգամ
հիվանդացած մարդը սովորաբար այնուհետև
երբեք չի հիվանդանում այդ հիվանդությամբ։
Ուրիշ խոսքով, բծավոր տիֆով հիվանդացածը
իմզենիտեա է ձեռք բերում այդ հիվանդության
նկատմամբ։

Երեխաները նույնպես հիվանդանում են

բծավոր տիֆով: Բայց նրանք հեշտությամբ են տանում այդ տիֆը և սովորաբար դրանից չեն մահանում: 300—500—1000 հիվանդ երեխայից մեկն է մեռնում բծավոր տիֆից:

Բծավոր տիֆով հիվանդանում են բոլոր տարիքի մարդիկ և ոչ ոք նրանցից իրեն ապահոված համարել չի կարող: Ուստի մեղանից յուրաքանչյուրը, ինչ տարիքի էլ նա լինի, որտեղ էլ աշխատելիս ու ապրելիս լինի, միշտ պետք է հիշի բծավոր տիֆի վտանգի, ոչլուտովելու վտանգի մասին:

Տարվա մեջ կա որոշ ժամանակաշրջան, երբ բծավոր տիֆն առանձնապես մեծ չափեր է ընդունում. ուստի և տարվա այդ ժամանակ պետք է հատկապես զգուշ և աշխուրջ լինել: Տարվա այդ շրջանը հունվար, փետրվար ամիսներն են և հետո, թիսնչև մայիս: Այդ երեույթը բացատրվում է նրանով, որ մարդիկ հավաքված են լինում տներում, ընտանիքում աճում է կուտակվածությունը, բացի դրանից, ձմռանը մարդիկ ավելի սակավ են լողանում, սպիտակեղենը նույնպես ուշ-ուշ է լվացվում: Ահա այսպիսի պայմաններում աճում է ոչլուտու-

թյունը, իսկ դրա հետ, ինչպես գիտենք, կապված է բժաշկոր տիֆը: Տարվա այդ ժամանակ վտանգավոր է և այն, որ ուրիշ վայրերից եկած մարդիկ ոջիւ, այսինքն բժաշկոր տիֆ են բերում իրենց հետ: Եթե հարց ու փորձ արվի ու պարզվի, թե եկողը ում հետ է ճանապարհ եկել, որտեղից և ինչպես է եկել, ապա պարզ կլինի, թե բժաշկոր տիֆը ինչպես է քոչում մի տեղից մի ուրիշ տեղ: Գարնանամուտին բժաշկոր տիֆը դեռ տարածվում է ու զարգանում և մայիսին միայն սկսում է վերջանալ, երբ մարդիկ սկսում են հաճախ լողանալ, հաճախ փոխել սպիտակեղենը, երբ տաք եղանակների կառակցությամբ պակասում է կուտակվածությունը: Ահա թե ինչով է բացատրվում բժաշկոր տիֆի սեզոնային ընթացքը:

Բժաշկոր տիֆի վարակն ինչպես է անցնում մեկից մյուսին: Այդ վարակն անցնում է միմիայն ոջիւների միջոցով:

Դեռ 1847 թ. Կովկասում աշխատող ուսուցիչներական բժիշկներից մեկի (Պրիբիլ) և 1876 թ. Օդեսայում աշխատող բժ. Մինինի դիտողությունները ցույց են տվել, որ բժաշկոր

տիֆլի վարակը մարդուց մարդուն է փոխանցվում միջատների (ոջիլներին) միջոցով: Սակայն բժիշկները Պրիբիլի և Մինխի այդ ճիշտ դիտողութուններն այն ժամանակ ոչ ոք հաշվի չառավ: Միայն Նիկոյլի, Կոնտի և Կոնսեյլի կողմից կապիկների վրա կատարած փորձնական աշխատանքները (կապիկներին վարակելով բժավոր տիֆով հիվանդների ոջիլներով) թունիսում (1909 թ.) երևան հանեցին այն դերը, որ խաղում են հագուստի ոջիլները բժավոր տիֆի վարակը տարածելու մեջ:

Նույն հեղինակներն ապացուցեցին, որ բացի ոջլի կծելուց, նույնիսկ այն դեպքում, երբ մարդու մարմնի վրա բժավոր տիֆով վարակված ոջիլ է ջարդվում և եթե մաշկի համապատասխան տեղում կա որևէ փրսավածք (քերվածք, փոքր վերք և այլն), այդ դեպքում ևս մարդը վարակվում և հիվանդանում է բժավոր տիֆով:

Այսպիսով առաջին իմպերիալիստական պատերազմից 5 տարի առաջ հեշյալ դիտանականներն ապացուցեցին և պարզաբանեցին այն, թե ինչպես է տարածվում բժավոր տիֆը և թե

հիվանդի մեջ ինչն է վարակիչ: Գիտենալով այդ՝
միանգամայն հնարավոր էր հետազայում ձեռք
առնել բժավոր տիֆի դեմ պայքարելու միջոց-
ները: Ավելորդ չենք համարում այստեղ հիշա-
տակել և մի ուրիշ օրինակ: 1876 թ. պրոֆ.
Մոչատկովսկին, վերցնելով բժավոր տիֆով հի-
վանդի արյունը, պատվաստել էր իրեն (այսինքն,
այդ ճանապարհով վարակել իրեն) և 18 օրից
հետո հիվանդացել էր բժավոր տիֆով: Կրկնում
ենք, որ այդ ամենը հայտնի էր առաջին իմպե-
րիալիստական պատերազմից առաջ:

Այստեղից մենք տեսնում ենք, որ բժավոր
տիֆի վարակը ուրիշին է փոխանցվում ոջիլ-
ների և առաջին հերթին ու գլխավորապես հա-
զուստի (մարմնի) ոջիլի միջոցով: Որոշ տվյալ-
ների համաձայն, բժավոր տիֆի տարածման
գործում դեր են խաղում նաև գլխի մազոտ մա-
սեխում ապրող ոջիլները (գլխի ոջիլ), սակայն
այդ դերը շատ աննշան է համարվում:

Երբ հազուստի (մարմնի) ոջիլը կծում է
բժավոր տիֆով հիվանդ մարդու և ծծում նրա
արյունը, ապա նրանում եղած վարակը (միկ-
րոբները) արյան հետ միասին անցնում է ոջիլի

ստամոքսը: Միկրոբները ստամոքսում բազմա-
նում են: Ողի կծելուց 4—8 օր անց (այդ ժա-
մանակամիջոցում միկրոբները բազմանում են
ողի ստամոքսում), երբ այդ ողիլը կծում է մի
ուրիշ առողջ մարդու, վարակում է նրան բժա-
վոր տիֆով*):

Ողիլն արագ է բազմանում և կարճ ժամա-
նակամիջոցում նրա թիվը մեծ չափերի է հաս-
նում. շատ կարճ ժամանակում հազարավոր
ողիլներ են առաջանում: Չափազանց խիստ ող-
լոտության դեպքում երբեմն մարդու մաշկը
ծածկվում է հազարավոր ողիլներից կազմված
մի նոր մաշկով: Անցյալ իմպերիալիստական
պատերազմի ժամանակ ռազմագերիների վրայից
կիլոներով ողիլ էին հավաքում: Կան սվյալներ,
որ նախկին պատերազմի ժամանակ 120 վիրա-
վոր ռազմագերիների վրայից 15 կիլոգրամ (մոտ
1 փուլթ) ողիլ են հավաքել: Շատ ողլոտ զորա-
նոցներում, անցյալում եղել են դեպքեր, — ինքս
ականատես եմ եղել նման դեպքերի, — երբ զո-
րանոցները շրջելիս ոտքի տակ սպանվող ողիլների

*) Ողի կծած տեղը անցնում են նույն ողի կղանքի
մեջ գտնվող բժավոր տիֆի միկրոբները և վարակում
այդպիսով մարդու արյունը:

ճթճթոց էր լավում: Ով չի տեսել այդպիսի բան,
դժվարությամբ կհավատա, բայց դա փաստ է:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ոջիլը
մեր ահավոր ու վտանգավոր թշնամին է:

Բնագետ Լէվենդուկն իր հայտնի գուլպայի
մեջ, 2 ամսվա ընթացքում, 2 էգ ոջիլից աճեց-
րել էր 18 հազար ոջիլ, իսկ ըստ պրոֆ. Պավ-
լովսկու, մի ոջիլից նրա ամբողջ կյանքի ընթաց-
քում ստացվում է 4160 ոջիլ:

Ոջիլների (գլխի և հագուստի) շարժման
մաքսիմումը, ըստ մեր դիտողությունների,
հասնում է 1—2 բուլեում մինչև 25—40 սմ.
իսկ պրոֆ. Պավլովսկու տվյալների համաձայն՝
35 սմ 1 բուլեում: Բոլոր ոջիլներն էլ սնվում են
արյունով, որի համար գործ են դնում իրենց
խայթոցը: Նկատի ունենալով, որ ոջիլ խայթոցը
միացած է թուր արտադրող գեղձերի հետ, ապա
դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ
արյունն ծծելու գործողության միջոցին արյունը
խառնվում է թրի հետ, իսկ թուրն ունի այն
հատկությունը, որ չի թողնում արյունը մա-
կարդվի: Ամեն մի ոջիլ օրվա ընթացքում մար-
դուն կծում է, միջին հաշվով, 2 անգամ: Ըստ

կատարած դիտողություններէ, ոջիլը միանգամից ծծում է 0.004-ից մինչև 0.0008 գրամ արյուն: Երբ կուշտ է, ոջիլը խուսափում է լույսից (բացասական վերաբերմունք դեպի լույսը): Զրի մեջ ոջիլը կարող է կենդանի մնալ մինչև 48 ժամ: Գլխի ոջիլը բեղմնավորվելուց 10-20 օր անց, դնում է օրական միջին հաշվով 4—5 անիծ, իսկ հագուստի ոջիլը՝ 5—12: Հայտնի է, որ ցուրտ պայմաններում, նույնիսկ 0-ից 10-12 աստիճան ցածր ոջիլը չի սատկում, այլ փայտանում է և տաք տեղ ընկնելով՝ հորից ապրում:

Հետաքրքրական է և պետք է հիշել, որ բծավոր տիֆով հիվանդի մարմնի վրա, որի ջերմաստիճանը 39—40-ից բարձր է, ոջիլներն իրենց լավ չեն զգում, հեռանում են այդ տիրուջից, դուրս են գալիս սպիտակեղենից և նոր մարդ որոնում ու վարակում ուրիշներին: Հետևիվապես պետք է շատ զգուշ լինել ոջիլոտ բծավոր տիֆով հիվանդներից: Այնուհետև հայտնի է, որ ոջիլ չի լինում նաև դիակի վրա (դիակի սառնության պատճառով): Նրան արյուն է հարկավոր սնվելու համար, բացի դրանից, դիակի

ջիրմաստիճանը անհամապատասխան է ոջիւնների
էյանքի համար: Հեռանալով բժափոր տիֆից
մահացած դիակի վրայից, ոջիւը նոր տեղ է
է որոնում և զտնելով այդպիսին, վառա՛ում է
նրան:

Ոջլոտության դեմ պայքարելու գործում
մեր աւտուալ խնդիրներից մեկը բաղնիքների
սխտեմատիկ և անխափան աշխատանքն է:
Եղած բաղնիքները պետք է մաքուր պահել և
այնտեղ պարբերաբար դեզինսեկցիա (միջատ-
ների ոչնչացում) կատարել: Բաղնիքներում
առանձնապէս վտանգաւոր են անհատական
արկղները, ուր դրվում է լողացողի հագուստը՝
Սյդ պահարանները անհրաժեշտ է հաճախակի
ախտահանել: Բաղնիքներից բացի, անհրաժեշտ է
նաև կադմակերպել լվացքատներ՝ առաջին հերթին
քաղաքներում, նորակառույցներում, արդյու-
նարերական կենտրոններում, սովխոզներում և
խոշոր կոլխոզներում:

Մնացած բոլոր տեղերում, որտեղ չկան
բաղնիքներ ու լվացքատներ, ամեն ոք պետք է
լավ հիշի, որ համենայն դեպս լողանալն անհրա-
ժեշտ է, որովհետև այլապէս մենք կարող ենք

ոջլոսել: Ոջիւններից ազատ մնալու համար ան-
 հրաժեշտ է գոնե 7—10 օրը մեկ անգամ լողա-
 նալ և լողանալուց հետո անսլայման հագնել
 մաքուր սպիտակեղեն, այլապես լողանալն իդուր
 կանցնի: Լողանալ կարելի է և տանը, միայն թե
 լինի ցանկություն և մաքուր լինելու անհրա-
 ժեշտության գիտակցություն: Հագնելու և ան-
 կողնի սպիտակեղենը լվանալու, ինչպես և լողա-
 նալու համար, պարզ է, որ սապոն է հարկավոր:
 Սապնի այն բաժինը, որ ստացվում է, հաճախ
 կանոնավոր չի օգտագործվում, սապոնն ընտա-
 նիքում այնպես չի բաշխվում, ինչպես հարկա-
 վոր է: Հաճախ տեսնում ես, որ երկու մարդ
 միևնույն քանակությամբ սապոն են ստանում,
 բայց տարբեր ձևով են օգտագործում: Նրանցից
 մեկը կանոնավոր կերպով օգտագործելով իր սա-
 պոնը, բոլորովին ազատ է լինում ոջիւններից, իսկ
 մյուսը նույնպես գործ է ածում իր ստացած
 սապոնը, բայց ոջլոտ է մնում: Ինչո՞վ բացատ-
 րել այդ: Նրանցից մեկը բաղնիքում կամ տանը
 լողանալուց հետո հագնում է մաքուր սպիտա-
 կեղեն (մի ժամի չափ եռացրած և հետո լվացած),
 փոխում է սավանը, բարձի երեսը և այլն, որով-

հետև նա գիտե, որ ոջիլներ կարող են լինել և սպիտակեղենի, և՛ անկողնի վրա: Իսկ մյուսն այդ չգիտե, և չանելով այդ, նա կեղտոտ ու ոջլոտ է մնում:

2489. Սապոն չլինելու կամ առհասարակ լվանալու միջոցների պակասության դեպքում կարելի է և պետք է օգտվել մոխրից, մոխրաջրից: Մոխրաջուր պատրաստելու համար 12 լիտր ջրին վերցնում են 1,5 կիլոգրամ մոխիր: Խառնելով կրակի վրա, լավ եռացնում են և սառեցնելուց հետո քամում են և ստացվում է «ուժեղ մոխրաջուր»: Ստացված մոխրաջուրը պետք է պահել դուլի կամ փոքր տակառի մեջ բժրանը միշտ փակ:

Մոխրաջուրը գործ են ածում հետևյալ եղանակով:

1) Սպիտակեղեն լվանալու համար մի մաս մոխրաջրին խառնում են մի մաս ջուր (եթե սպիտակեղենը շատ կեղտոտ է) կամ մի մաս մոխրաջրին երկու մաս ջուր (եթե սպիտակեղենը շատ կեղտոտ չէ): Այդ խառնուրդի մեջ եփում են սպիտակեղենը, ըստ որում, նպատա-

կահարմար է մի դույլ խառնուրդին ավելացնել
1/4 բաժակ նալթ:

2) Մարմինը լվանալու համար մի մաս
մոխրաջրին խառնում են 3 մաս ջուր: Մոխրա-
ջուր պատրաստելու համար կարելի է գործածել
թղթենու (береза), սոճու (сосна), եղևնու (ель)
կամ կաղնի ծառի մոխիր, միայն մաղելուց
հետո: Մոխիրը պետք է պահել չոր տեղ:

Նկատի ունենալով, որ բարձր ջերմության
ազդեցության տակ ոջիլներն ու նրանց անիծները
ոչնչանում են, այդ միջոցի նպատակահարմար
գործադրությամբ կարելի է լավ հետևանք-
ների հասնել: Այդ նպատակի համար մենք խոր-
հուրդ կտայինք տաքացնող զանազան ապարատ-
ներից ընտրել բանվորական շրջանների, ՄՏԿ-
ների, սովխոզների համար հղած ոջիլ ջարդող
կամերաները (вошебойка):

Հեշտ և արագ կիրառվ կառուցելու նպատա-
կով գործ է ածվում, այսպես կոչված, գետնատան
կամերան, որը շինված է գետնի մեջ, երկու դռնե-
րով, երկու հակադիր բաժանմունքներով, մա-
քուր և կեղտոտ իրերի համար: Կամերայի չա-
փը խորհուրդ ենք տալիս վերջինի 2,5×4,5

մետր, իսկ բարձրությունը 2 . 2 մետր: Կամե-
րայի տաքացումը կատարվում է երկաթյա եր-
կու վառարաններով, որոնք դրվում են կամե-
րայի հակադիր կողմերում: Վառելու տեղը պետք
է անել դրսից, իսկ խողովակներն անցկացնել
կամերայի ներսի պատերով:

Ոջիլների ու անիծների վրա շատ լավ է
ներդրվում նաև նազիթը (շորերը կամ սպիտա-
կեղինը սովորական նավթի մեջ թրջելիս կամ
նրանց վրա նավթ սրսկելիս, ոջիլներն ու անիծ-
ները ոչնչանում են 1—2 րոպեից հետո): Սպի-
տակեղենը, անկողնի պարազաները և այլն ոջիլ-
ներից ազատ պահելու համար շատ հաճախակ
և արմատական միջոց է նրանց եփ տալը մոխրա-
ջրի մեջ: Ոջիլները և նրանց չափազանց դիմաց-
կուն անիծները, եռացող ջրի մեջ շատ շուտ
ոչնչանում են: Վերնադղեռորը և առհասարակ
այն իրերը, որոնց եփ տալ չի կարելի և բենզի-
նով և նավթով օգտվելու հնարավորություն չկա,
նստատակահարմար է ոջիլներից մաքրել զանա-
զան քիմիական նյութերով թրջված կոշտ խո-
ղանակով: Էփանության և ախտահանական
տեսակետից, այս վերջիններից լավ են սապնա-

կրեզոլյան պրեպարատները, որոնք շատ կարճ
ժամանակամիջոցում ոչնչացնում են միջատ-
ներին: Այսպես օրինակ, կրեզոլյան նավթալի-
զոլի 10⁰/₀ լուծույթում թրջված սպիտակեղենի
ոջիլներն ու անիծները բոլորովին ոչնչանում են:

Մարմնի մազոտ մասերում գտնվող ոջիլ-
ներից ազատվելու ամենահիմնական միջոցը մա-
զերը հեռացնելն է և մաքրելը: Եթե այդ մի-
ջոցը գործադրելու հնարավորութուն չկա, այդ
դեպքում ոջիլներին ու անիծներին ոչնչացնելու
համար գործադրվում է բենզին կամ նավթ:

Բենզինի կամ նավթի մեջ թաթախված մի
շորի կտորով լավ պետք է թրջել մարմնի մա-
զոտ մասերը: Կարելի է նաև բենզինով կոմսո-
րես դնել գլխի վրա՝ 10 րոպե տևողությամբ:
Այդ ժամանակամիջոցում ոչնչանում են թե
ոջիլները թե նրանց անիծները, լավ է ներգոր-
ծում նաև մի շատ էֆան միջոց, քացախը, որով
թրջում են մազերը՝ լվանալուց առաջ: Նա
լուծում է անիծների սոսնձանյութը, որով
նրանք կպած են լինում մազերին: Մնացած
բազմաթիվ միջոցների վրա մենք կանդ չենք

առնում, նրանք բոլորն էլ հիմնականում նույնն են, ինչ ասացինք վերևում:

Գյուղական վայրերում, որտեղ կան թոնիրներ և ուրիշ միջոցներ գործադրելու հնարավորություն չկա, առաջարկվում է շորերը թափ տալ թոնիրներում: Հաց թխելուց հետո թոնիրներում սովորաբար տաքությունը պահպանվում է երկար ժամանակ: Մեր անձնական փորձը ցույց է տվել, որ գյուղական կյանքի պայմաններում այդ միջոցը համապատասխան լավ է ֆեկա է տալիս:

Թոնրի վրա դնում են տախտակներից կամ փայտե ձողերեց պատրաստված վանդակ, իսկ նրա վրա դարսում ոջլոտված հագուստը: Քանի որ սկզբում, վառելուց հետո $1\frac{1}{2}$ ժամ անց, ջերմատիճանը շատ բարձր է լինում, դարսում են ոչ թե բրդե կամ մահուղե իրերը, որոնք այդպիսի բարձր ջերմատիճանից շատ շուտ փչանում են, այլ բամբակեղեն շորերը (հագնելու, անկողնի սպիտակեղենը և այլն): Անհրաժեշտ է այդ իրերը դարսել առանց պինդ սեղմելու, որովհետև սեղմված իրերի մեջ չոր տաքությունը չի անցնում: Այնուհետև թոնրի բերանը ծածկում են փայտյա

կամ մետաղյա կափարիչով, կամ թե բրնձնա-
կանգուն տալրակով (բերանքսիվար), որը ունե-
նալու է թոնրի տրամագծից մի քիչ մեծ տրա-
մագիծ, իսկ բարձրությունը $1\frac{1}{2}$ -ից մինչև $1-1\frac{1}{2}$
մետր (նայած թոնրի մեծությանը): Այդ իրերը
պահվում են $1\frac{1}{2}$ ժամ: 2—3 ժամից հետո 45
րոպեից մինչև 1 ժամի չափ տեղավորվում են
մահուլի իրերը և 30—45 րոպեի չափ՝ բրդե
իրերը: Թոնրի չոր տաքությունից կարելի է
օգտվել նաև մորթեղենի համար. թոնիրը վա-
ռելուց հետո 3—4 ժամ անց դարսում են մոր-
թեղենը շուռ տված (թարս երեսին) թողնելով
այնտեղ $1-1\frac{1}{2}$ ժամ:

Ինչպես ցույց են տալիս մեր դիտողու-
թյունները (դեռևս 1926 թվականից), գյուղական
վայրերում թոնրի վրա ի կերի մշակումը, որպես
պրիմիտիվ չորատաքային սարքավորում, բայց
լայնորեն մատչելի շատ անդրում, էֆեկտիվ
է լինում մշակումը կրկնելու չեղքում (ամենա-
քիչը 2 անգամ):

Ստիտակեղենի և շորերի արդուկելը նույն-
պես լավ արդյունքներ է տալիս:

Հանրակացարաններում և ընդհանուր բա-

բաժնեւրում ապրողները (բանվորներ, ուսանողներ և այլն) ոչլուտութեան դեմ պայքարի միջոցները պետք է ձեռք առնեն կազմակերպութեան և միասնաբար, այլապես ոչիլը կարող է անցնել մի ուրիշին և այդպիսով նորից ոչլուտութեան առաջացնել:

Ոչլուտութեան, հետեւապես բժաւոր տիֆի դեմ հաջողութեամբ պայքարելու համար անհրաժեշտ է նաև խիստ մաքրութեան պահպանել կոլխոզնիկի տներում, հյուրանոցներում, իջեվաններում, ուր գալիս են մարդիկ զանազան տեղերից, որոնց մեջ լինում են ոչլուտ և ոչ ոչլուտ մարդիկ: Այդպիսի տեղերը հեշտութեամբ կարող են վարակի օջախ դառնալ: Ուստի հեշտ տեղերում յուրաքանչյուր հաճախորդից հետո անպայման պետք է փոխվի անկողնի սպիտակեղենը և մինչև լվանալը ավտահանման ենթարկվի: Իսկ թե ինչպես պետք է ավտահանել, այդ մասին պետք է հարցնել սանիտարական բժշկին: Բժաւոր տիֆի դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու տեսակետից առանձին հետաքրքրութեան են ներկայացնում սեզոնային բանվորները, որոնք նախ քան աշխատանքի

անցնելը պետք է ենթարկվեն սամաշակման (խուզեն մագերը, լողանան բաղնիքում, փոխեն հագնելու և անկողնի սպիտակեղենը): Նույնպիսի կարգ պետք է սահմանվի նաև մեր գործարաններում, ֆաբրիկաներում, ձեռնարկություններում, նորակառույցներում, սովխոզներում, որտեղ աշխատանքի են ընդունվում նոր բանվորներ:

Մանկական հիմնարկներում (դպրոց, մանկապարտեզ, մսուր, կոնսուլտացիա և այլն) առանց հետաձգելու պետք է խստա արմատախիլ անել ոջլոտությունը: Ոչ մի դպրոցական, ոչ մի պիոներ ոջլոտ չպետք է լինի: Ոջլոտ աշակերտին պետք է տուն ուղարկել և պահանջել ծնողներից, որ վերջիններս մաքուր պահեն իրենց երեխաներին: Այս տեսակետից մեծ է պիոներական կադմակերպության դերը և շատ օգտակար կլինի, եթե երեխաներին պարբերաբար քննեն ոջլոտություն հայտաբերելու նպատակով. նման ձեռնարկումները հսկայական օգնություն կլինեն ոջլոտության դեմ մղվող պայքարի գործում:

Ի՞նչ պետք է անել, եթե բժավոր տիֆը

այս կամ այն ճանապարհով մուտք գործի մեղ մոտ: Եթե նա արդեն մուտք է գործել, ապա վա-
խենալու, գլուխը կորցնելու հարկ չկա: Անհրա-
ժեշտ է միջոցներ ձեռք առնել բծավոր տիֆը
տեղն ու տեղը ոչնչացնելու համար:

Ո՞րոնք են այդ միջոցները:

Ամենից առաջ չպետք է թաքցնել բծավոր
տիֆի դեպքերը: Յուրաքանչյուր նոր դեպքի
մասին անմիջապես պետք է հայտնել տեղական
բժշկին, սանիտարական բժշկին: Վարակի տեղը
եկած բժիշկը անմիջապես կարգի, թե որտե-
ղից է առաջացել այդ վարակը և էլի մեծ կարող
էր վարակել նա: Հիվանդին շրջապատողները,
որոնց կծել են բծավոր տիֆով հիվանդի ընկ-
ները, կարող են լինել հիվանդության գաղտնի
շրջանում. ուստի բժիշկը նրանց 25 օր շարու-
նակ առնում է իր հսկողության տակ:

Բծավոր տիֆի օջախը աբաղ կերպով լիկ-
վիդացնելու համար հիվանդին, որպես վարա-
կիչ հիվանդի, պետք է անմիջապես հիվանդանոց
տեղափոխել, իսկ հիվանդին տեղափոխելուց հե-
տո, անպայման սանմշակման ենթարկել բնա-

կարանը, ընտանիքի բոլոր անդամներին և նրանց, որոնք շփման միջ են եղել հիվանդի հետ: Բժավոր տիֆով հիվանդին, որքան կարելի է, վաղ պետք է հայտարարել, որովհետև մարդու հիվանդության առաջին օրերին նրա վրա ապրող ոջիլները համարյա բոլորն էլ վարակվում են (ոջիլների 85—90%₀ այդ ժամանակ է վարակվում), այնինչ հիվանդության 10—12-րդ օրը վարակվում է ոջիլների միայն 4—5%₀: Ահա թե ինչու անհրաժեշտ է հիվանդին, որքան կարելի է, շուտ մեկուսացնել:

Այս դործում մեզ կարող են օգնել անբուժ արվող շրջագայությունները, որոնք անց են կացվում շաբաթական 1—2 անգամ. շրջագայության ժամանակ հայտարարվում են տենդող հիվանդները, այնտեղ, որտեղ կան բժավոր տիֆի դեպքեր, ավելի լավ է այդ տենդող հիվանդներին դոսպիտալիզացնել, որովհետև առաջին 2—3 օրը դժվար է բուժել ճիշտ դիագնոզը և ասել՝ բժավոր տիֆ է, թե ոչ: Իսկ եթե հաշվի առնենք այն, որ հիվանդի արյունն ձժած ոջիլը ինքը վարակիչ է դառնում 4—5 օրից ոչ շուտ (որովհետև ոջիլի օրգանիզմում 4—6 օրվա ընթացքում տեղի

է ունենում բծավոր տիֆի միկրոօրնի բազմացումը), ապա առաջին 1—2 օրը մեկուսացնելով տենդոյ հիվանդներին և անմիջապես անցկացնելով սանմշակումը (ոջիւնների ոչնչացումը), մենք բծավոր տիֆով հիվանդին շրջապատողներին ազատում ենք վարակվելուց:

Այսպես է բծավոր տիֆը: Ոջիւնների և բծավոր տիֆի դեմ պայքարելու անհրաժեշտութունը պարզ է ու հասկանալի: Եթե չկա ոջիւ, ապա չկա և բծավոր տիֆ: Բծավոր տիֆով չհիվանդանալու համար կարելի է պատվաստումներ անել բծավոր տիֆի դեմ, բայց դա պայքարի դժվարին ու ոչ այնքան մասսայական միջոց է: Բծավոր տիֆի դեմ պայքարելու ամենահուսալի միջոցը ոջիւններին ոչնչացնելն է:

Սովետական երկրում չպետք է լինի և ոչ մի ոջլոտ քաղաքացի:

Հայրենական պատերազմի օրերին, երբ արյունարբու Հիտլերի ֆաշիստական բանդաները ուխտադրուժ կերպով հարձակվել են մեր երկրի վրա և այժմ մեր պանծալի կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ գլխակորույս կո են շարտվում դեպի արևմուտք, հարկավոր

է ամեն կերպ պաշտպանել իրեն և շրջապատող-
ներին բժավոր տիֆով հիվանդանալուց և դրա-
նով էլ ավելի ամրապնդել թիկունքը, որն օգ-
նում է ռազմաճակատին, ազատել նրան բժավոր
տիֆի երևան դալու և տարածվելու սպառնալիքից,
որը, ինչպես հայտնի է, կատարված է նախ և առաջ
մարդկային զանգվածների տեղափոխություն-
ների և թիկունքի լարված պայմանների հետ:

Շուտով լրանում է մեր վզին փաթաթած
պատերազմի 3 տարին: Սակայն շնորհիվ սովե-
տական առողջապահության ձեռք առած եռան-
դուն միջոցառումների, մեր երկրում բժավոր
տիֆի էպիդեմիա չկա:

Ուրախանալով դրանով, մշտապես պետք
է հիշել պատերազմի ժամանակ բժավոր տիֆի
սպառնալիքի ու վտանգի մասին և չթուլացնել
այդ վարակի դեմ մղվող պայքարի թափը:

Հայկ. ՍՍՌ-ի Առողջկոմատի Սան-լուս բաժին:

Պատ. խմբագիր

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037245

ՎՖ 00628. Պատվեր 209, Տիրաժ 3000, $\frac{3}{4}$ տպագրական մամ.
Հեղինակային 0,7 մամ., Ստորագրված է
տպագրության 20/V 44 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, 1944

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

A $\frac{1}{2489}$